ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

SAINT GREGORY THE ILLUMINATOR
MEDICAL CENTER

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԲԸ-Ի

ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

«Հաստատում եմ»
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ
պետական բժշկական քոլեջի
տնօրինական խորհրդի նախագահ՝
Ռ. Սարգսյան
«23» 12.2025թ.

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ, ՋՈՒԳԱՀԵՌ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱԶԱՏՄԱՆ, ՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ԱՎԱՐՏՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

/ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ/

ԵՐԵՎԱՆ 2025

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պետական բժշկական քոլեջում (այսուհետ՝ Քոլեջ) ուսանողների ընդունելության, փոխադրման, մասնագիտության փոփոխության, հաջորդական և զուգահեռ կրթության, ազատման, հեռացման և ավարտման ընդհանուր սկզբունքները:

1.2. Կարգը կազմելիս հիմք են հանդիսացել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման», «ՀՀ պետական հավատարմագրված նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու», «Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը հաստատելու մասին» կարգերը, «Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունը անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման» կարգերը հաստատելու մասին հրամանները, Քոլեջի կանոնադրությունը, «Ուսանողների ներքին կարգապահական կանոնները», «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ պետական բժշկական քոլեջի ուսանողների բացակայությունների լրացման կարգը», Քոլեջի ուսանողի պայմանագիրը և այլ իրավական ակտեր:

2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ուսանողների ընդունելությունը կատարվում է ՀՀ ԿԳ նախարարի «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատելու մասին» 05.04.2012թ. N254-Ն հրամանանի համաձայն:

3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՒՐՍԻՑ ԿՈՒՐՍ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Տվյալ կուրսի ուսումնական պլանով նախատեսված տեսական, լաբորատոր-գործնական առաջադրանքները և ուսումնաարտադրական պրակտիկաները, բոլոր քննությունները, մոդուլներն ու ստուգարքները հաջող հանձնած ուսանողները, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի ներկայացմամբ և տնօրենի հրամանով փոխադրվում են հաջորդ կուրս, իսկ ավարտական կուրսերի ուսանողներն իրավունք են ստանում մասնակցելու պետական որակավորման քննություններին:

3.2. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին քննությունների, ստուգարքների և մոդուլների ամփոփման արդյունքներով մինչև երկու ակադեմիական պարտք ունեցող ուսանողներին տրվում է պայմանական փոխադրում՝ վերաքննական շրջանում պարտքերը մարելու պայմանով:

3.3. Կիսամյակի ուսումնական ծրագրերը չկատարած ուսանողները, քննաշրջանում երեք տարբեր առարկաներից անբավարար» ստացած, ինչպես նաև լուծարման շրջանում երեք անգամ «չստուգված» կամ անբավարար ստացած և սահմանված ժամկետներում առարկայական պարտքերը չմարած՝ անբավարար ակադեմիական առաջադիմության դեպքում կամ ուսման վարձը չվճարած ուսանողները ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի ներկայացմամբ և տնօրենի հրամանով հեռացվում են ուսումնական հաստատությունից:

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ուսանողների մասնագիտության փոփոխությունը կատարվում է ՀՀ ԿԳ նախարարի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եվ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունը անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգը հաստատելու մասին» 05.11.2011թ. N 1278-Ն հրամանի համաձայն:

5. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԶՈՒԳԱՀԵՌ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Ուսանողների զուգահեռ և հաջորդական կրթությունը կատարվում է ՀՀ ԿԳ նախարարի «մեկից ավելի արհեստագործական եվ միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը հաստատելու մասին» 12.03.2011թ. N 194-Ն հրամանի համաձայն:

6. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԶԱՏՈՒՄԸ

Ուսանողն ազատվում է քոլեջից.

6.1. Իր դիմումի համաձայն, բացառությամբ սույն Կարգի 3.3 կետով նախատեսված դեպքերի:

6.1.1. Ուսանողի դիմումի համաձայն քոլեջից ազատման դեպքում, նրան տրվում է ազատման հրամանի պատճենը, ակադեմիական տեղեկանքը կրթության հիմքը հաստատող փաստաթուղթը, իսկ պատճենը պահվում է ուսանողի անձնական գործում:

6.2. Այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելու դեպքում՝ «ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգը հաստատելու մասին հրաման»-ի համաձայն:

6.3. Ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքում (տարկետում), առողջական վիճակի պատճառով (ակադեմիական արձակուրդ), հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում(նպատակային արձակուրդ)՝ «ՀՀ պետական հավատարմագրված նախնական, միջին, բարձրագույն

և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգ»-ի համաձայն:

7. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄԸ

Ուսանողը հեռացվում է քոլեջից.

7.1. Ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով՝ կիսամյակի արդյունքներով 3-ից ավելի առարկաներից (մոդուլներից) անբավար գնահատական ունենալու կամ չստուգված ստանալու դեպքում կամ մինչև 3 առարկայի կրկնակի վերահանձնումից անբավարար գնահատվելու դեպքում՝ մանկավարժական խորհրդի որոշմամբ:

7.2. Քոլեջի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով հեռացում սահմանված դեպքերում:

7.3. Քոլեջի կողմից սահմանված կարգով ուսման վարձը չվճարելու դեպքում,

7.4. Ակադեմիական արձակուրդի ժամկետը լրանալուց 10 օրյա ժամկետում անհարգելի պատճառով քոլեջ չներկայանալու և չվերականգնվելու դեպքում:

7.5. Ուսանողի հեռացման հրամանը տրվում է տնօրենի կողմից, որի մասին ուսանողը (և կամ նրա օրինական ներկայացուցիչը) նախապես տեղեկացվում է: Սահմանված կարգով կատարվում է վերջնահաշվարկ:

8. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՎԱՐՏՈՒՄԸ

8.1. Ուսանողների ավարտական գործընթացը կատարվում է ՀՀ ԿԳ նախարարի «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը հաստատելու մասին» 21.07.2006թ. N 638-Ն հրամանի համաձայն:

8.2. Շրջանավարտի համար տրվող որակավորման և պետական ավարտական նմուշի փաստաթղթերը (դիպլոմները) հաշվառվում և գրանցվում են գրանցամատյանում (դիպլոմների բաշխման գիրք): Դիպլոմների հետ մեկտեղ տրվում են ուսումնառության ընթացքում ուսումնառած առարկաների (մոդուլների), դրանց ժամաքանակների և ամփոփիչ գնահատականների նշումով ավարտական ամփոփիչ ակադեմիական առաջադիմության տեղեկանք (ներդիր), որը հաշվառվում և գրանցվում է ակադեմիական տեղեկանքների գրանցամատյանում: Շրջանավարտը /լիազորված անձը/ իր ստորագրությամբ վավերացնում է նշված փաստաթղթերը ստանալու փաստը: